

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ Հ. Ն. — Հայոց կղզիին 250-ամեակը 1717-1967 (Շար.) . . . 53

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՆԻԱՆ Հ. ՊՈՂՈՍ. — Վարք. Ս. Մեսրոպ Մաշտոցի (Շար.) . . . 58

ԶԻՐԱԿԵԱՆ Հ. ՔԵՐՈՒՅԷ. — Գանիել Վրդ. Ստորոյ՝ Մեկնութիւն Սաղմոսաց Դաւրի (Շար.) . . . 69

ՔԻՐՈՍՏԵԱՆ Յ. — Նոր նիւթեր երեմիա Զէլեւի Գեղամիւրեանի մասին (Շար.) . . . 88

ԼԵԶՈՒԱԿԱՆ

FEYDIT Prof. Fr. — L'état de la langue arménienne au V^e siècle . . . 75

ԳԻՏԱԿԱՆ

ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. — Զարմախալ գաւառի ժողովրդական բժշկութիւնը (Շար. և վերջ) . . . 95

ԳՐԱԿԱՆ

ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ Հ. ԵՓՐԵՄ. — Բանագող յողուածագիր մը . . . 99

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — Կիլիկեան Խոհեր. Ե. Սիս . . . 103
Զ. Լամբրոն . . . 104

ՍԻՐԱԿԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. — Հ. Եղիա Վրդ. Փէշիկեան . . . 105

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՔԻՐՈՍՏԵԱՆ Յ. — Յուցակ հայերէն ձեռագրաց Զմառնի վանքի մատենադարանին, Մեսրոպ Վ. Քէշիշեանի, Վիեննա, 1964 . . . 106

ՔԻՐՈՍՏԵԱՆ Յ. — Armenische Handschriften, J. Assfalg et J. Molitor, Վիպպուտեն, 1962 . . . 107

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Հ. Ն. Տ. Ն. — Հիմնարկէ՛ք ձեռագրաց նոր մատենադարանի ի Ս. Ղազար . . . 108

Հ. Լ. Զ. — Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ Ն. Ս. Օ. Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի այցելութիւնը ի Ս. Ղազար (24-26 Մայիս, 1967) . . . 111

ARTICLE DE FOND

DER-NERSESSIAN P. N. — Le 250ème anniversaire de l'île des Arméniens: 1717-1967 (Suite) . . . 53

PHILOLOGIE

ANANIAN P. PAUL. — La vie de St. Mesrop (Suite) . . . 58

TCHERAKIAN P. CHERUBIN. — «Egégèse des Psaumes» de Daniel le Syrien (Suite) . . . 69

KURDIAN H. — Nouvelles découvertes sur Yérémiä Tchélébi Keumurdjian (Suite) . . . 88

LINGUISTIQUE

FEYDIT Prof. Fr. — L'état de la langue arménienne au V^e siècle . . . 75

SCIENCES

YEREMIAN ARAM. — La médecine populaire de la région de Tcharmahal (Suite et fin) . . . 95

LITTÉRATURE

DER GHAZARIAN P. EPHREM. — Un écrivain plagiaire . . . 99

HOVHANNESSIAN P. VAHAN. — Souvenirs de Cilicie: V. Sis . . . 103
VI. Lambron . . . 104

SIRABIAN ARAMAYIS. — P. Elie Paitchikian . . . 105

RECENSIONS

KURDIAN H. — Catalogue des manuscrits arméniens de la bibliothèque du couvent de Bzommar, de Mesrop Vard. Kaichichian, Vienne, 1964 . . . 106

KURDIAN H. — Armenische Handschriften, de J. Assfalg et J. Molitor, Wiesbaden, 1962 . . . 107

ECHO ARMENIEN

P. N. D. N. — La cérémonie de la fondation de la nouvelle bibliothèque des manuscrits, à St. Lazare . . . 108

P. L. Z. — La visite de S. S. Khorène 10, Katholikos de Cilicie, à St. Lazare . . . 111



1843 - 1967
ՃԻՆ. ՏԱՐԻ

ԹԻՒ 3 - 5
ՄԱՐՏ - ՄԱՅԻՍ

ԲԱԶՄԱՎԵՅ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXV^e année, 1967, N. 3 - 5 Mars - Mai

ՅԻՇԱՏԱԿԻ ԽՈՀԵՐ

ՀԱՅՈՑ ԿՂԶԻՆ 250ԱՄԵԱԿԸ

(1717 - 1967)

Բ.

Նիւթական չէնքերուն հետ՝ բարձրացան նաեւ որմերը բարոյական կառոյցին, զոր կերտեց Միխիթար Արքաշայր, Ազրիականի հիւրընկալ ամբարձր: Ամէն ազրիական եւ ամէն խոյակի հետ, որոնք զեղեցիորէն կը զաւարուէին կամարներն ի վեր՝ այդ աննշան կղզեակին, հեռահեռ զարձակելով զայն՝ արուեստի հոյակապ յուշարձան մը, Միխիթար կը զանգէր վեհապետին ոգին, կը շարունակէր հայրենի վանականութեան աղօթանուէր խորհուրդը՝ հայկականութեան արեւարոյր շունչով:

Այո՛, չէնքերու արտաքին զիծերը, տաճարին սիւները չունէին ազգային մեր ճարտարապետութեան հարազատ բնութիւն, չկային սլացիկ զմբէթները մեր բլրեղէն խաչերէն, եւ ոչ խաչքար մը՝ մեր տաճարապետ վարդապետներու քրտնքով տաշուած. սակայն, նժդեհ Հայրապետին հերոսական ճիգերով վերանորոգ այդ կղզեա-

կին մէջ՝ կու գար հանդիպել «Վեհափառ Ոգին Հայաստանեայց», իր շնորհալի սուրբերով ու քաջարի զիւցաղներով, իր հաղթամեայ մատենաներով ու հոգեհուազ շարականներով, իր հարազատ լեզուով, տարազով, ծէսով եւ աւանդութիւններով:

Այդ սրանդուխտ վանականները, Ազրիականի ամառուն ալիքներէն յափըռտակուած՝ հայրենի Սեւանն ու Հրազդանը կ'երազէին յաւիտ, կամ Վենետիկեան տոժերու մեծաշուք փառքերուն ի տես՝ Տիգրանի եւ Լեւոնի օրերը կ'ապրէին հոգեւին: Անոնք կանգնած Եւրոպայի քաղաքական մեծ վերլիպայրուներու անդունդին վրայ՝ հայրենի վերածնունդը կը շնորհէին, ոգեկոչելով Զիրաւն ու Աւարայրը: Արեւմուտքի սրբավայրերուն երկրպագու՝ իրենց արցունքներուն մէջ կը յիշէին Գեղարդն ու Շողակաթը, Վարդանն ու Բջինն անտերունչ. տառ վանքերու

զրացի՝ անոնք Մաշտոցի ու Նարեկացիի բուրվառէն կ'առնէին իրենց խունկը մըշտարծարծ:

Օտարութեան մէջ, փոքրիկ Հայաստան մը կազմուած էր, իսկական հայ վանք մը, հոգեկան սրբութեան եւ մշակութային զարգացման կեդրոն մը, որու բնակիչները զաղանիքն ունէին՝ ներդաշնակօրէն ձուլելու կրօնք, ազդութիւն եւ մշակոյթ. զաղանիքն ունէին մանաւանդ՝ օտարէն ծծելու առաւելութիւններու նեկտարը, կազմակերպչական ոգին, և զանոնք վարպետօրէն պատուաւորութեամբ հայկականութեան բուն լինելը վրայ:

* * *

Մխիթարի հետեւորդները ասորեցան այդ հայկականութիւնը, ամէնէն առաջ, վաճառական վերանորոգ կազմակերպութեան մը մէջ, ներանձնացեալ կեանքի անկեղծ ու երկիւղած նուիրումով:

Մխիթար Արքայապետ իր դաստակերտին շինութիւնը սկսած էր եկեղեցիէն. խորհրդանշանն էր ասիկա՝ վերանորոգումի իր մեծ ծրագրին եւ անոր հիմնաքարը: Այնուհետեւ, 250 տարի անընդհատ, Ս. Ղազարի կամարներուն տակ կը հնչէր Հայոց ժամերգութիւնը, ինչպէս հայրենի տաճարներուն մէջ. այդ վտարանդի վաճառականները, որոնց սրտին ու երեւակայութեան մէջ միշտ ներկայ էր հայ ժողովուրդը՝ իր երգերով ու վէրքերով դարաւոր, կ'աղօթէին միաբան, խունկ կը ծխէին, անդաստաններով կ'օրհնէին Հայոց աշխարհն հեռուոր. մինչ անդին, Հալիճօրի մարտիկները կը մաքառէին՝ հայրենի ազատագրութեան տենչով:

Ամէնօրեայ ժամերգութեան առնթեր, որ անխափան կը շարունակուի մինչեւ այսօր, Մխիթար կը սահմանէր վանական կեանքի ուրիշ հրահանգներ եւս, որոնք՝ անտարակոյս՝ կը զործադրուէին ժամանակին, Հայաստանի հին վանքերուն մէջ: Սուրբ Խորհուրդին ջերմեռանդ եւ յարատեւ մատակարարումը, մտաւորական խոկումներու եւ բարեպաշտական այլ ա-

րարողութիւններու հետ, կու գային դարձնել Սուրբ Ղազարը իսկական կեդրոն մը հաւատքի եւ աւետարանական ապրումներու, դարձնող առաքինութեան եւ վարպետանոց աստուածխոհութեան:

Ս. Անտոն անապատականի պաշտպանութեան յանձնուած այս փոքրիկ մենաստանը կ'ուզէր շարունակութիւնն ըլլալ Սերաստիոյ Ս. Նշան վանքին, որ նոյնպէս, Մխիթար Արքայապետ հաւատումնէն ըստ համաձայն, Ս. Անտոնի օրինակին հետեւող վանք մը եղած էր, ուր կրօնաւորած էր ինք Հիմնադիրը, իր մանկութեան եւ երիտասարդութեան օրերուն: Շարունակութիւն, բայց վերանորոգ ծրագրով ու կազմակերպութեամբ:

Երեք ուխտերու յայտնի յանձնառութիւններով՝ ազատօրէն կապուած Քրիստոսի ու Եկեղեցւոյ, Ս. Ղազարի հայ վաճառականները կը ջանային ըլլալ վիաներն Աւետարանին եւ Աստուծոյ խօսքին: Ազատութիւնը պիտի ըլլար իրենց միակ հարստութիւնը, հնազանդութիւնը՝ իրենց ոյժը, կուսակրօնութիւնը՝ զրաւական իրենց յաջողութեան, իսկ միաբան զործունէութիւնը՝ իրենց զօրը սրբապան:

Աստուածաշունչի յարատեւ ընթերցումը, որ լուսութեան մէջ կը հնչէր ամպիոնէն, ճաշի եւ ընթրիքի պահերուն, միշտ կու գար յիշեցնել անոնց՝ թէ «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ» որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»:

Հաստափոր ձառնախրներու եւ Յայտմաւորքներու վրայ կըրած, անոնք արքանաջան աշխատանքով կը հաւաքէին մեղրը մեր նախնեաց հարազատ դաւանանքին եւ աստուածաբանական հարստութեան, վաճառական կեանքի քաղցրութեամբ օծուն:

Այսպէս, ուսումը եւ մատենադրական հմտութիւնը կ'ըլլար անրաժան ընկերը ազօթքին, անոր մէկ մասը. սրտի եւ հոգիի կրթութեան հետ, կը զարգանային նաեւ մտքերը, համբերատար թարթափումներով ձեռագրական աշխարհին մէջ, յարատեւ ընթերցումներով՝ ոչ միայն հայ, այլ նաեւ եւրոպական լաւագոյն հրատարակութիւններուն:

Ազօթք, հաւատքի կեանք, ներանձնացեալ ապրում, կը կազմէին աջ թեւը Մխիթարի հետեւորդներուն. անոնց տալու համար հօր թոխք՝ կարեւոր էր նաեւ երկրորդ թեւը, ուսումը. եւ լուսամիտ Հիմնադիրը զուգեց այս երկուքը, իրագործելու համար իր մեծ երազը:

Լուսաւորութեան արշալոյսը կը բացուէր՝ կրօնական ու վանական վերածրունդի հորիզոնին վրայ:

* * *

Ուսումնական ծրագիրը, զոր Մխիթար, 1711ին իսկ կը յօրինէր ու կ'ենթարկէր եկեղեցական իշխանութիւններու վաւերացումին, գիտական բարձր մակարդակով ստեղծագործութիւն մըն էր. քերականական, պատմական ու հետազոտական գիտութիւններուն առնթեր, թուարանական ուսումները էական մասը կը կազմէին այդ ծրագրին, մէջն ունենալով բնաբանութիւնը, աշխարհագրութիւնը, աստղաբանութիւնը եւ երաժշտութիւնը. ասոնցմէ ետք՝ իմաստասիրութիւնը կը տեւէր առ նուազն երկու տարի, աստուածաբանութիւնը՝ երեք տարի:

Ահաւասիկ տանաւեայ խոշոր ծրագիր մը, որ կը համապատասխանէ մերօրեայ յետ-նախակրթարանի ուսումնական ծրագրերներուն, համալսարանն ալ ներփակ. ծրագիր, զոր կարեւոր նկատած էր Մխիթար՝ իր վանականներու մտային կազմաւորումին համար:

Այդ ծրագրի մէջ նշանակուած են ուսանելի նիւթերը մէկիկ մէկիկ, դասաւանդութեան ժամերը, կերպը. սահմանուած են չարաթական կրկնութիւններ, հասարակաց վիճաբանութիւններ, մանաւանդ փիլիսոփայութեան ու աստուածաբանութեան ընթացքին. որոշուած են քննութիւններու պայմանները, ուսուցիչներու ընտրութեան եղանակը, վարդապետական աստիճանի ձգտողներէն պահանջուած զրաւոր աշխատանքներն ու փորձերը. զանց չէ եղած նոյնիսկ՝ միջակ կարողութեամբ օժտուած անհատ-

ներու կատարելիք ուսման աստիճաններու չափը:

Մխիթար ինք կը դասաւանդէր, մեծ մասով, այդ գիտութիւնները, եւ կը յօրինէր յարմար դասագրքեր: Ի յրումն այսպիսի աշխատանքներու, կը ձեռնարկէր թարգմանելու, իր աշակերտներէն պատրաստուած ու կարող տարերու օգնութեամբ, աստուածաբանութեան հրահայ հատորները Թոմաս Ագուինացիի, որ Արիստոտէլի հետ՝ մտերմագոյն դէմքերը կ'ըլլային այս նոր դպրոցին:

Եւրոպական դպրոցի ուղղութեամբ, աստուածաբանական ամէն մէկ հարցի դիմաց, Մխիթարի աշակերտները կը պրպտէին հայ ազրիւրները, կը քննէին Մաշտոցէն Տաթեւացի երկարող շրջանը, ու կը գտէին ոսկին՝ խաւար դարերու ժանդէն:

Օտար ասիերու վրայ ծաղկող այս հայ վանքը՝ իսկոյն կ'առնէր ուշադրութիւնը տեղական կղերին եւ աշխարհական դասին, որոնք մեծ դնահատանքով ու ըզմայլանքով կը նայէին Արեւելքէն եկած այս գեղեցիկ մարդարիտին:

Հրաշեայ Աճառեանի վկայութեամբ, Մխիթարի վանքը շուտով կը դառնար մեր վանականութեան ծաղկած կեդրոններէն մէկը, շատ աւելի փայլուն եւ գիտական մակարդակով աւելի բարձր՝ քան Բաղէշի, Տաթեւի, Էջմիածնի, Նոր Զուղայի վանքերը, որոնք չէին կրցած տոկալ ժամանակի աւերին, կարճ կեանք էին ունեցած, եւ քիչ ժամանակ փայլելէ ետք՝ հանդած էին արդէն:

Ուսումնապէս լիովին պատրաստուած այս վանականներուն՝ Մխիթար Արքայապետ կու տար հուսկ վարդապետական ծայրագոյն աստիճան, ինչպէս ինք ստացած էր Հնձուց վանքի առաջնորդ՝ Մարգար Եպիսկոպոսէն, ու կ'առաքէր զանոնք Հայաստանի զանազան դաւառները՝ քաղցրութեան, ըստ հայկական Վարդապետներու հինաւուրց սովորութեան: Այդ շրջուն առաքեալները կ'անցնէին քաղաք, Պոլսէն սկսած դէպի Կարին, ապա նաեւ զաղութները Եւրոպայի, ցանկ-



